

ՆՈՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Վ. ՓԱՓԱՉՅԱՆԻ  
«ՀԵՏԱԿԱՐՁ ՀԱՅԱՑՔ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻՄ

Ա. 2. ՊԵՏՐՈՍԱՆ

Որևէ գրողի լեզուն և ոճը, մասնավորապես նրա բառապաշարն ուսումնասիրելիս մեծ նը-  
շանակություն է ձեռք բերում նորակազմ բառերի, նոր իմաստների և բառազորածությունների  
քննությունը: Վերջիններս «գնահատվում են որպես հեղինակի ներդրում գրականության լեզվի  
զարգացման մեջ կամ որպես արդյունք գեղարվեստական նպատակներով առաջացած անհա-  
տական բառաստեղծման»: Գեղարվեստական ստեղծագործության բառապաշարի ուսումնասիրու-  
թյան առումով կարևորվում է անհատական-հեղինակային նորակազմությունների քննությունը,  
որի դեպքում «պարզվում են տվյալ հեղինակի բառային-գեղարվեստական ստեղծագործության  
անհատական ոճին բնորոշ հնարանքներն ու միջոցները»<sup>2</sup>: Ոճական նպատակադրումով, ասե-  
լիքը բանաստեղծականորեն, պատկերավոր ու հուզական արտահայտելու համար ստեղծագոր-  
ծողն իր կազմած նոր բառերով, նոր բառազորածությամբ, բառի իմաստային կառուցվածքի  
ընդլայնումով թարմացնում է տվյալ լեզվի բառապաշարը, նորովի հնչեցնում մոռացված, «գա-  
րերի փողով ծածկված» շատ բառեր ու արտահայտություններ: Սրանց մեջ առավել հաջողված  
գործածությունները «կարող են արմատանալ լեզվի մեջ»<sup>3</sup>, դառնալ համազարկան լեզվի հա-  
րըստությունը և մուտք գործել տվյալ ազգային լեզվի բառազանծը: Այսպիսով, գրողը կարող է  
նպաստել բառային կազմի համալրման գործընթացին:

Անհատական նորակազմությունները, ստեղծվելով խոսքային համապատասխան իրադրության  
մեջ, մի կողմից նպաստում են լեզվի արտահայտչականության հնարավորությունների ընդլայն-  
մանը, մյուս կողմից՝ նրա բառապաշարի հարստացմանը: Ուստի գրողի լեզվաոճական առանձ-  
նահատկությունները բացահայտելու համար կարևորվում է հեղինակային նորարանությունների  
քննությունը, քանի որ դրանք առարկաները, երևույթները, հասկացությունները, շրջակա աշ-  
խարհը անհատական ընկալումով արտահայտելու արդյունք են:

Հանգամանորեն քննելով «Հետադարձ հայացք»-ում գործածված նորակազմ բառերն ու այլ  
կարգի նորարանությունները՝ կարող ենք ասել, որ Վ. Փափազյանն ինքնօրինակ ձեռագիր ունի  
նաև այս ասպարեզում: Աշխարհն ու երևույթները բանաստեղծական յուրատեսությամբ ընկա-  
լելու և արտահայտելու հարուստ ներուժով նա ստեղծում է նոր կազմություններ, որոնք օժտ-  
ված են ոճական նորահայտ իմաստային նրբերանգներով: Զգացմունքներն ու մտքերը ոճական  
պատշաճ մակարդակով ու որակով արտահայտող շատ բառեր, որ գործածել է Փափազյանը,  
ընդգրկվել են արդի հայերենի բառարաններում և ընդհանրապես միտում ունեն հայերենի  
ընդհանուր բառամթերքում: Այս իմաստով նշելի է Փափազյանի դերը ժամանակակից գրական  
հայերենի բառապաշարի հարստացման ուղղությամբ: Սույն հոդվածում քննության առարկա  
մասնաշերտում տարրերակել ենք՝

1. նորակազմ բառեր

2. նորարանություններ ավելի նեղ առումով՝ այս ենթավերնագրի տակ ընդգրկելով բառի  
ամեն մի նոր իմաստ, բառիմաստի թարմացում, բառազորածության նոր իրողություն:  
1. Նորակազմ բառեր: Վերը նշեցինք, որ Վ. Փափազյանը նյութի թելադրանքով հասկացու-  
թյունը նոր ձևով, նոր ընկալումով արտահայտելու, իմաստային նոր նրբերանգներ հաղորդելու  
պահանջով կազմում է նոր բառեր: Բառային ոճարանության մեջ հիմնականում ուրվազովում  
է հեղինակային նորարանությունների երկու խումբ՝ համատեքստի բառային միջավայրով և  
համատեքստային ներքին իրադրությամբ պայմանավորված հեղինակային բառեր<sup>4</sup>: Փափազ-

<sup>1</sup> В. В. Виноградов, Проблемы русской стилистики, М., 1981, с. 205.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային փճարանություն, Երևան, 1989, էջ  
224:

<sup>4</sup> Տե՛ս Ա. Էլոյան, նշվ. աշխ., էջ 207:

յանի հուշագրութիւնն մեջ գործածված նորակազմութիւններէ մեջ առավելապէս կարևորվում են երկրորդ խմբին դասվող կազմութիւնները, ուստի մեր ուսումնասիրութիւնները ծանրացել են այդ կարգի բառերի վրա:

Մինչ նշված բառախումբը ներկայացնելը պետք է ավելացնենք, որ, ընդհանրապէս, ոճաբանական ուսումնասիրութիւններում և մենագրութիւններում որոշակի դժվարութիւն, եթէ շատերն անհնարինութիւն և պայմանականութիւն կա այս կամ այն գրողի կերտած նոր բառերի կազմը ճշտութեամբ և հստակորեն որոշելու հարցում, քանի որ համապատասխան հեղինակային բառարաններ գրեթէ չկան: Դժվարութիւնը, երբեմն էլ անորոշութիւնը պայմանավորված են նաև նրանով, որ առանձին դեպքերում հնարավոր չէ միանշանակ պնդել, թե այս կամ այն բառը Փափազյանից առաջ գործածվել է, թե՛ ոչ: Միզուցեց այդ բառը երբեք գործածվել է որևէ գրողի որևէ երկում, բայց ընդգրկված չէ արդի հայերենի բառարաններից որևէ մեկում: Այս դեպքում հեղինակային նորարանութիւնների քննութիւնը գրեթէ անհնարին է դառնում, քանի որ հայ գրականութիւնն անհատակ օվկիանոս է եղած բառարանների համեմատութեամբ: Ուստի այս կարգի հետազոտութիւններ կատարելիս պետք է որպէս հիմք ընդունել բառարաններում գետնադրված բառամթերքը: Եվ մենք ցանկանում ենք ընդգծել, որ խնդրո՞ւ առարկա բառերի շուրջ մեր բոլոր դատողութիւնները և դիտարկումները սահմանափակվում են այն բառազաննի շրջանակներով, որ ընդգրկված է արդի հայերենի առկա բառարաններում, այլև՝ Հայկազյան բառարանում: Այս սկզբունքով քննելով «Հետադարձ հայացք»-ի բառապաշարը՝ փափազյանական նորակազմութիւններ ենք համարել բոլոր այն բառերը, որոնք

ա) չկան Սո. Մալխասյանցի (ՀՔԲ), էդ. Աղայանի (ԱՀՔԲ), ինչպէս և Գիտութիւնների Ակադեմիայի հրատարակած ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում (ԺՀՔԲ)<sup>5</sup>,

բ) չկան ՀՔԲ-ում, իսկ ԺՀՔԲ-ում և ԱՀՔԲ-ում տրված են միայն Վ. Փափազյանի հուշագրութիւնից բաղկած օ, ինականներով կամ հզվղ. (հազվադէպ) նշումով, ինչպէս՝ անխորշմ, բավընչացֆ, կիսաբափ, հեռագարկ, սերեագալիթ. վազմակառույց, ֆեմալուր, անզարտահատույց, դիմանկարիչ, քառեագուրկ, ինֆեալույզ, փորձարեմ, սիւսաբախան, օսկեզմբեթ, ճաշամիջոց, հելտանիստ, իրահորիզոն, լայնհորիզոն, լեշաճարակ, դափնաճոյզ, գեղաշնորհ, գեղաճոն, գաղտնաբախիժ, բնագուրկ, բեմադրվեստ, բարեմադրաճ, բազմապատասխան, բազմաշուրտ, աշուժատիպ, անհղկելի, անծպտուն, անծով, խնձորաբուսական, ղժվարաճաղող, բարձրակենցաղ, արծվառուճ, անգարթուն, ամենափուլ, փարթամորձայն, վերջակետել, ջրակառույց, ջրաճիսա, այրատյաց, այրամեծ, բազմակենցաղ, Երբակենցաղ, օսկափազարգ, օսկեղձույզ, օսկեշերտ, քառուղամեծ, քառուղակործան, ճարմանդապատ, կլորափոք, կլորաորովայն, ծանրափեղկ, ծանրախորհուրդ և այլն: «Անբացատրելի հրճվանքով վերադառնում էի դպրոց՝ մութ, խոնավ կանաչների միջով, լայնաթոք շնչելով ջրակառույց վենետիկի յուրահատուկ բուրմունքը» (Ա 96)՝: «... Այդ բարձրակենցաղ հարուստ մթնոլորտում ինձ գգում էի որպէս այդ տան դավակը» (Ա 168),

գ) որոշ վերապահութեամբ փափազյանական ենք համարել նաև այն բառերը, որոնք չկան Սո. Մալխասյանցի և ԳԱ բառարաններում, իսկ էդ. Աղայանի բառարանում տրված են այն իմաստով ու նորբերանդի բացատրութեամբ, որով գործածել է Փափազյանն իր երկում կամ նորից տրված են հզվղ. նշումով: Մեր կարծիքով սրանք բառարան են ներմուծվել «Հետադարձ հայացք»-ից: Այսպէս, անվանապոչ բառը բացատրվում է. անվանապոչ—(հեղանական)— անվան պոչը, վերջը: Ահա և քնադրային օրինակը. «1793-ի հեղափոխութիւնից ի վեր աղբը վականութեան տիտղոսը սովորական կանաչու արծեք իսկ լուսի ֆրանսիացու աշրտմ, և առավոտյան վաղ տեղից վեր կեցողը կարող է, եթէ ուզում է, մի որևէ գլուղի կամ ավանի անոն կպցնել իր անվան առաջ և հորոշրել իրեն պանվական: Մեր Մարտիկը ևս նույնն էր արել, լինելով քնիկ Կարտալ գլուղացի, իր անվանապոչին կպցրել էր դը Կարտալ մակդիրը, սեմական ևս արամական ցեղերը իրար խառնելով՝ անվանել իրեն Սեմ Արամ և բարհաճան էր ծընվել Բագրատունյաց ցեղից որպէս ավիկի հանրածանոթ անուն համաշխարհային հերալդիկայի ցուցակներում» (Ա 149): Կամ՝ հեզճեղ—հեզանք՝ ծաղր պարունակող երգ՝ բանաստեղծութիւն. «Արփիարայանը, սալոնի մարդու քրիզանթեմը միշտ իր լամբակին, հեզճեղը շրթունքին, հոգնած քաղթեմու նման վերեփից նույնց իր ժամանակին, կենցաղավարական օրինքներով համեմեց իր սլաքները, խոցեց ու գնաց» (Բ 311): Մեծմայրաճալ (հզվղ.)— 1. մեծ մայր, տատիկ դառնալ. 2. փորձ՝ ծերանալ. «Սակայն հրապուրները բազմիցս կորցրած, բազմիցս մայրացած, հաճախ և մեծմայրացած դերասանուհիներ, երբ փորձում է դեռևս կանգնել ծաղկման արահետներին, փակելով ճանապարհը իր հետևից եկողներին... ներքի չէ... այլև մեծ մեղք է» (Ա 96), Մտամոլորում (հզվղ.)— 1. մտամոլոր լինելը, դառնալը. 2. մտքի շեղում՝ մոլորում՝

5 Փակագծերում նշված են բառարանների համառոտ անվանումները  
6 Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, Երևան, 1979, հ. 1:  
7 Վ. Փափազյան, Հեղադարձ հայացք, հ. 2, Երևան, 1981:

սխալում. «Սիրում եմ երկար մտավորումներով մի հետադարձ ու քննող ակնարկ նետել վերջացած ներկայացման վրա և թատրոնից դուրս գալ վերջինը...» (Ա 48), Վարժվածք (ճգվզ) — շարժուն. «Թուսը ծանր, վարժվածքը հանդարտ, արծվի նաչվածքով առինցնում էր մեզ, և մեր մատաղ հոգիներն իր բարի հղոր ձեռքերի մեջ ամփոփելով, թրծում էր, ինչպես կամ, շաղախում և ձևավորում» (Ա 51):

Այս կարգի բառեր են նաև՝ հարցափնտրել, մարդեղել, մերկաստիկ, մերկասունկ, սուկեցեց, սուկեվանդակ, բյուրալեզու (փխր, իմաստով), բազմազմբեթ, անփարս, անցով, անձավանձգիսա բառերը:

Այժմ տեսնենք, թե ինչ ուղիներով են ձևավորվում հեղինակային նորակազմությունները «Հետադարձ հայացք»-ում՝ նյութ քաղելով ա) բառախմբից: Դրանք ստացանում են ժամանակակից հայերենի բառարարքման և ածանցման կաղապարներով: Վ. Փափազյանը նոր բառեր է կերտում հայերենի բնորոշ բառակազմական տարածված և անսպառ հնարավորություններ ընձեռող միջոցներով: Հետաքրքրական են բառարարքումով կազմված ածականներն ու դրուսականները: Դրանց մի մասը կազմվել են առարկաները, երևույթները նոր ձևով արտահայտելու անհրաժեշտությանը, ինչպես՝ գոնդողակերպ, լույզիվանման, կիսախում, կիսափառակ, հարցաշատ, ճիվազանման, մեռելայց, նույնաերևույթ, տափակաղունչ, տեսվայր, փարիզամերձ, ապրանքարժ, տառաստեղծում, բավվարենկ, նախանայտարարություն, որոնք նրպաստում են խոսքի նպատակայնությանը, դիպուկությանը և հստակությանը: Մի մասն էլ հեղինակը գործածում է իր ասելիքը, խոհերն ու ապրումները արտահայտչական-ոճական անհրաժեշտ ներբանգներով և ուժով ներկայացնելու համար, ինչպես՝ ազնվատիտղոս, ակնածախառն, ամենախառ, անասնաբար, դյուրագեղեցիկ, բազմակորով, լայազարդ, լայնաթոք, հանկարծաստեղծ, չարավեռ, սիրագալար, սիրահալած, երկնահուր, քարահյուս: Վերջիններս հույսարտահայտչական մեծ ներուժ ունեն և գեղարվեստական հազցեցվածություն են հաղորդում համատեքստին: Երբեմն բարեհնչունություն և համառոտություն միտումով բաղադրյալ բառերի հեղինակազմը որոշ փոփոխությանը է գործածված՝ հաստատված, կամ՝ հարադրավոր կազմությունը միավորվում է մեկ կաղապարի մեջ՝ ծովաբացներ, զույգաբար: Երբեմն էլ խոսքը սեղմելու նպատակով Փափազյանը գործածում է նորակազմություններ, որ շարահյուսական որևէ ազատ կապակցության ամփոփումն են, այսպես՝ փափուկ անիվներ ունեցող, փափուկ ընթացող-ը խտանում է փափկանիվ-ի մեջ, չարք ավետողը՝ չարավեռ-ի, սիրոց հալածվածք-ը՝ սիրանալած-ի և այլն: Համատեքստից դուրս էլ ակնառու է նորակազմ հեղինակային նշված բառերի իմաստային տարողունակությունը, փոխաբերական-բանաստեղծական մտածողության արտացոլումը (սիրագալար, անասնաբար են):

Ուշադրություն բառապաշարում արձանագրել ենք նաև ածանցումով բաղադրված նոր կազմությունները: Բառակազմական այս եղանակով Փափազյանը ստեղծում է գոյականներ, ածականներ, հրբեմն նաև՝ մակրայներ և բայեր, որոնք ինքնատիպ են և արտահայտիչ: Այս նորակազմությունների զգալի մասը ան- նախածանցով կազմված բառեր են, որոնց մեջ նշելի են գրական լիարժեք այնպիսի կազմություններ, ինչպես՝ անակոս, անարգելակ, անթառոն, անլյարդ, անկանաչ, անկոտորակելի, անընտելանելի, անհայ, անսփոռց, անփոթորիկ: Թուրահատուկ են ամենա- ածանցով կազմված մի քանի կազմությունները: Սովորաբար ամենա-ն դրվում է ածականների վրա՝ կազմելով դրանց գերադրական աստիճանը, ինչպես՝ ամենալավ, ամենաքաջ են: Փափազյանի արձակում հանդիպում են այդպիսի, մեր կարծիքով հազվագեղ, անսովոր կազմություններ՝ ամենաարգասաբեր, ամենաաչառու, ամենաանաբհետ, ամենա-եզակի, ամենողովարեղացանելի: Դրանց կողքին այս բառերի նմանողությունը նա կազմում է «ամենա-դուրանկան» կաղապարով առավել յուրահատուկ ածականներ, որի շնորհիվ ընդգծվում է սովյալ բառի իմաստն ու արտահայտչականությունը՝ ամենաեռագետ (ժամանակ), ամենա-քառերագետ, ամենարվեստագետ (մարդ): Հետաքրքիր նորակազմություններ են գեր-, վեր-, համ- նախածանցներով կազմված գերբերելի, վերգզույլ, համաբնույթ ածականները: Ստեղծագործության բառապաշարն ուսումնասիրելիս հանդիպել ենք նաև ուլտրա- փոխառյալ նախածանցով ստեղծված նորակազմությունների, որոնց շնորհիվ հեղինակը խուսափում է միօրինակությունից կամ նույն ածանցներն ու բառերը կրկնելուց. երկում համախ են գործածվում գեր-, ամենա-, ջատ, չափազանց սաստկական իմաստ արտահայտող ածանցներն ու բառերը, և Փափազյանը համատեղելով քնիկ հայերեն և փոխառյալ հոմանշային ձևերը՝ ստեղծում է ուժի բազմազանություն, լեզվի ճկունություն՝ ընթերցողի ականջը շանձարացնելով միապաղաղ կրկնություններով (ուլտրախրապաշա, ուլտրակոսմոպոլիտ են):

Որոշ դեպքերում Փափազյանը նախափրում է ղեղած կաղապարով ստեղծել նոր կազմություններ ընդունված, լայնորեն տարածված ձևի ավելի թարմ հնչող հոմանշային ձևով կաղապարի բաղադրիչներից մեկը փոխարինելով դրան իմաստով մոտ ածանցով: Այսպես, համամատենք հետևյալ զույգերը. անդրաշխարհային և անդրաշխարհյան, մերձանպատային և մերձանպատայան, մերձբեռնային և մերձբեռնայան: Այս օրինակներում -ային-ը փոխարինվել է -յան-ով, որ սովյալ կազմություններում նոր գործածություն է՝ կարծես ավելի է ընդգծվում սեզի, քան հատկանշային, ափսոսանքային իմաստը: Այլ օրինակներում, նպատակ ունենալով

հատկապես շեշտել, ավելի ընդգծել հատկանշական-ածականական իմաստը, Փափազյանը -այլին վերջացանքով կազմում է զամփոռային, շարժանկարային, խորխորատային ածականները: «Քայց հազիվ էի հասել դպրոցի մուտքին, ևրբ դռնապան Անտոնիոյի զամփոռային դուռը շրջանակ-վեց դարպասի փոքր պատուհանի մեջ, շարխիթիդ հաչոցով հայտնելով, որ տեսի հրամանով լիցեյի դռները փակ էին իմ առաջ մինչև լույս» (Ա 96): Եթե համեմատենք զամփոռի և զամփոռային զույգերը, անշուշտ կենսատենք նրբերանգային տարբերությունը նրանց միջև, ինչպես նաև վերջինիս ռճական արդյունավետությունը:

Հանդիպում են -ալիս ածանցով նորակազմություններ, որոնք դիպվածական բնույթ ունեն: Դրանց արտահայտած իմաստներն ընկալվում են միայն իրենց համատեքստերում, ինչպես՝ ցլամարտական նուպա (Ա 313), «խնձորարածական» ձգտումներ (Ա 89), աշխարհաշինական դիցաբանություն (Ք 329), որոնք գործածված են միայն նշված բառակապակցություններում և ընդհանրական բնույթ չեն կրում:

Վ. Փափազյանի բառակազմական նախասիրությունների մեջ հարկ է նշել -ում(ն) ածանցի հաճախակի կիրառությունը, որով նա կերտում է նոր գոյականներ, ինչպես՝ բուրվառում, խքանում, մտամզլում, զունգեղում (տալ), դիմահարդարում: Սրանց մի մասը ոչ թե նոր հասկացությունների արտահայտություններ են, նոր բայանուններ, այլ պարզապես եղած արմատի հետ սովորաբար գործածվող -անք, -ուրյուն, -մունք, -է ածանցների փոխարեն հանդես է գալիս -ում-ը, որ տվյալ դեպքում դիտվում է որպես նորամտություն, ինչպես՝ կասկածում, խոռովում, խնկարվում, խանդավառում, խղճահարում: «Ախտոս, որ հողեկան խոռվում առաջ եկավ նրա մեջ. նա կորցրեց իր հավասարակշռությունը...» (Ք 91): Եղած կաղապարի մեջ բաղադրիչներից մեկը փոխարինելով իմաստով մոտ այլ բաղադրիչով, Փափազյանը կերտում է ոչ սովորական, զարացած կաղապարների համեմատությամբ թարմ ձևեր: Նշված առանձնահատկությունը հատկապես զգալի է, երբ միևնույն հասկացության համար առկա են բառի -ում/յ-ուրյուն ածանցներով զուգաձևերը: Փափազյանը նախընտրում է առաջին ձևերը՝ դերբարշխում, դիմահարդարում, դերակատարում, Լրկորդները գործածելով կրկնությունից խուսափելու նպատակով: Այս կազմությունների մեջ շատերը -ումն զրաբարյան ածանցի պարզեցումով, վերջնահանգ ն-ի սղմումով առաջ եկող բայանուններ են, որոնց դիմաց սովորական խոսքում գործածվում են հարմարապես բայերը՝ բափառում, խոժում, տաքսում, հուրանում, զբաղում, զրաբում, շիթում, սահմակում, աղավաղում, ընթերցում, լքում, զգեսավառում, կրկնում, ճրճարում, շառաղում, ձեռնարկում: Այսպիսի գործածությունների անսովոր երանգն ընդգծվում է հատկապես, երբ հեղինակը թեք հոլովաձևերում նախընտրում է անհնչյունափոխ տարբերակները, ինչպես՝ աղավաղումի, զգեստավորումով, ընթերցումով, լքումի, կործանումի, շառաղումով, մեկնումի: Այսպիսով, կարծես, շեշտվում է -ում ածանցի գործածությունը: Սա փորձում ենք քայքայել Վ. Փափազյանի լեզվի վրա արևմտահայերենի ազդեցությամբ, ուր սովորական են նշված կիրառությունները: Մի կողմից այսպես կոչված «ում-ի նախընտրանքը» արևմտահայերենի ազդեցության հետևանք է, բայց մյուս կողմից անոտանք, որ, ինչպես Ս. Մելքոնյանն է նշում, արդի գրական լեզվի մեջ գոյականներտ ածանցների արդյունավետ օգտագործման միտում կա՞ն: Նա առանձնացնում է Պ. Սեակի փորձը՝ -ում-ի օգտագործման հարցում: Սակայն, ինչպես վկայում են այլ ուսումնասիրություններ (ներառյալ և մեր այս փորձը), այն թերևս սկիզբ է առել Գ. Դեմիրճյանից<sup>3</sup>, Վ. Փափազյանն էլ իր հերթին եզր է արդի գրական լեզվի զարգացման այդ հունի ակունքներում:

Երկի ուսումնասիրության ընթացքում հանդիպում են -ունի ածանցով կազմված դիպվածական բնույթի բարդություններ, որոնք կարծես անխուսափելի են թվում կնամեծար Փափազյանի շարադրանքում: «Գոյական+ունի» սովորական, ընդունված տեսակասեռային տարբերակների կողքին գրողն անկաշկանդ կերպով կազմում է «ածական+ունի», «մակբայ+ունի» կաղապարներով գոյականների՝ շնաշխարհիվանի, տառապանքի, մոգիկանունի, բազմունի: Սերբացի ռճական արդյունավետությունն ու արտահոսությունը բացատրվում է բաղադրիչների իմաստային անհամատեղելիությամբ, որի շնորհիվ, սակայն, տվյալ համատեքստում դրանք արտահայտիչ են և շեշտված են ռճական օժտվածությունը:

Ածանցավոր նորակազմ բարդությունների մեջ կան մակբայներ՝ այստեժեռորեն, քառեռակաճեռեն, հիվանդագիճեռեն, ծայրագույճեռեն, կենցաղայճեռեն, եկրապակեճեռեն, քառեռապեն, որոնց գործածությունը նույնպես կապում ենք արևմտահայերենի բնորոշ բառագործածությունների հետ:

Համեմատաբար սակավ թիվ են կազմում նորակերտ բայերը: Այսպես, ապտոռ զոյականից Փափազյանը կերտում է ապտոռելի, (ապտոռչվել, ապտոռչված) շատ ինքնատիպ կազմությունները, որ մի դեպքում պատկերավոր ձևով նկարագրում են հայ ժողովրդի գլխին պա-

<sup>3</sup> Տե՛ս Ա. Մելիքճյան, Ակնարկներ հայոց լեզվի ռճարանության, Երևան, 1984, էջ 170:  
<sup>4</sup> Տե՛ս Տ. Խղաբյան, Գ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմվածքի լեզուն և ռճը, Երևան, 1988, էջ 65:

տուհաս, անխուսափելի շարիք դարձած թուրք սուլթանին, մեկ այլ դեպքում՝ նույնքան արտահայտչականությունը ու գեղարվեստական պատկերումով արտացոլում Լենինգրադի սպիտակ գիշերների գեղեցկությունը. «... եվ սուլթաններից չեմ հիշում որը, Սելիմ Երկրորդը թե Իբրահիմ Առաջինը, միևնույն է, դարերից ի վեր ապառուշված շարիքը մեր ժողովրդի գլխին... մտավ Երևան՝ մեր լույս մայրաքաղաքը» (Բ 394): «Սպիտակ գիշերները, այդ շքեղ վարսածահլեղ հյուսիսի Պայմիրայի, որով ամառն գիշերներին ապարոշում է իր գեղեցիկ ճակատը բեկեռի պլորուհին, գնահատ խնկարկումով հմայել էր քաղաքի բնակիչներին» (Բ 449):

Հանդիպում են «գոյական, ածական+ացն+ել» կաղապարով հետևյալ կազմությունները՝ ֆրանսիականացնել, կենսականացնել, պարողիացնել, գեղարվեստականացնել: Մեկ-երկուսն էլ «գոյական+ավոր+վել» կաղապարով են կազմվել՝ բեղավորվել, պոռտֆելավորվել: Հատկապես ուշագրավ է վերջինը. «Նա բռնեցքները հենեց սեղանին և շնորհալից աղմուկով ետ շարժեցնելով աթոռը նոր պոռտֆելավորված մինիստրի ամբարտավանությամբ, ոտը ոտի վրա, սկնդը թթին և կեղտոտ գրիչը ականջների հետև՝ հայտարարեց...» (Ա 424): Հեղինակը ակնհայտ հեգնանքով է խոսում «աթոռ» կորզած նորարարյա պաշտոնյայի մասին, որը ոչ թե ժողովրդին ծառայող նախարար է, այլ պարզապես «պորտֆելավորված» մարդ, «պորտֆելով» մարդ դարձած ոմե, որի իրական նկարագիրը պորտֆելն է և ոչ՝ մարդկային սովորական կերպարանքը: Սրանք այն մարդիկ են, որոնք իրենց «փոքրիկությունը» փորձում են թաքցնել «նորին մեծություն» Պորտֆելի ետևում:

Որպես առանձնակի հետաքրքրություն ներկայացնող բայական նորարանություն, կուզենայինք նշել բառացանցել բայը, որն իր համատեքստում նշանակում է «բռնելով ցանցապատել, կաշկանդել, բառախեղդ անել, բռնելի ցանցի մեջ գցել»: Սա, ի տարբերություն վերը նշված նորակազմությունների, կազմված չէ ածանցյալով. «Դարավերջի արևմտյան թատերգությունը... միշտ հավակնություն է ունեցել... հաճելի կերպարանքով ախտը ներկայացնել հանդիսատեսին, և ոճերը, իր անցողակի մի անհրաժեշտություն, համեմել իրական կյանքը մի երեսպաշտ չավատեսությամբ, մի խոսքով՝ ընտելացնել անընտելանելին, ճակատագիրը... կաշկանդելով նրան բառացանցելով» (Բ 343):

Այսպիսով, Վ. Փափազյանը նորակազմությունների է դիմում, երբ մի դեպքում հիմնական նպատակը հասկացություն անհրաժեշտ ճկունությամբ ու նրբերանգով արտահայտելն է՝ անընտելանելի, անսփռոց, անկանաչ, տեսավայր, փարիզամերձ, փափկանիվ, իսկ մյուս դեպքում՝ հասկացությունը վառ, բանաստեղծական, պատկերավոր արտահայտելը: Երկրորդ դեպքում կարևորվում է բռնելի՝ գեղագիտական արժեքով օժտված լինելը, և Փափազյանի ստեղծած շատ նորակազմություններ այդպիսի բնույթ ունեն՝ նույնաչա, զեղանոն, ռիկեդոկույզ, սիրաբախանձ և այլ բռնել:

2) Հայտնի է, որ բառագիտական տեսակետից նորարանություն է համարվում բառի ամեն մի նոր իմաստ, բառագործածություն նոր իրողություն<sup>10</sup>, իմաստային այս կարգի նորարանությունները լեզվի բառապաշարի զարգացման և հարստացման ներքին կարևոր միջոց են<sup>11</sup>: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ փափազյանական նորարանությունների մեջ ներառել, առանձնացրել ենք բավական թվով բռնել, որոնք նորաստեղծ կամ նորակազմ չեն, շատերն էլ զետեղված են ժամանակակից հայերենի տարբեր բացատրական բառարաններում, սակայն «Հետադարձ հայացք»-ում հանդես են գալիս նոր իմաստներով, նրբերանգային և փոխաբերական նոր շեշտերով, նոր բառագործածությամբ: Լեզվական ունակության և խոր իմացության շնորհիվ Փափազյանը հմտորեն թափանցելով բռնելի խորքը՝ բառիմաստի նորանոր նրբերանգներ է հրեան հանել, շատ դեպքերում փոխաբերական նոր, ավելի խոսուն, արտահայտիչ նրբիմաստ հաղորդելով բռնելին: Հաճախ այս նոր իմաստներն ընկալվում են միայն տվյալ կապակցություն մեջ: Այս դեպքում կարևոր նշանակություն է ստանում համատեքստը:

Բռնելի այս խմբի մեջ ուշագրավ է արձանահատ բառը, որ հայտնի է իր իմաստներով՝ 1. այն վայրը, որտեղ հաստատված է առաջնորդական օթոռը, 2. մայրաքաղաք, որտեղ գտնվում է թագավորական գահը: Փափազյանը, սակայն, վերջինս գործածում է «աթոռանիստ դիրեկտոր» բառակապակցության մեջ բոլորովին այլ իմաստով. «Ցավալի է, չէ՞, որ Գրիշինը այլ բան չըշահեց» ներկայացումներից, բացի հասույթից, բայց ի՞նչ չես ների արձանահատ մի գործակալորի» (Բ 273): Հեղինակն իր բացասական, հեգնական-արհամարհական, փոքր-ինչ էլ երգիծական վերաբերմունքը բավական հաջող կարողանում է արտահայտել նշված բառով, որ այստեղ նշանակում է՝ աթոռապաշտ, աթոռին կպած, կարծես միայն նրանով իմաստավորված խղճուկ գործակալոր:

Խարենիչը բառը Ստ. Մալխասյանցի բառարանում տրված է որպես հազվագիպ գործածություն ունեցող ածական հետևյալ իմաստով՝ «լավ նիշ, լավ թվանշան ունեցող»: Հուշագրության մեջ, սակայն, գործածված է գոյականի իմաստով և նշանակում է՝ «արժանիքը նշող լավ

<sup>10</sup> Տե՛ս էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 169:

<sup>11</sup> Տե՛ս Ս. Էրյոյան, Եզվ. աշխ., էջ 75:

խոսք, նշում» և հետագա բառարաններում տրված է միայն «Հետադարձ հայացք»-ից թաղված օրինակով: «Սա լավագույն բարենիշն է անշահախնդիր և արվեստասեր այդ անունների հաս-  
ցեին...» (Բ 237): Նման ձևով ունենք ղյուրահաղորդ բառը՝ «հշտ հաղորդակցող, հշտ տա-  
րածվող» իմաստներով, իսկ հեղինակն այն գործածում է Երարենամբույր, մարդամոտ իմաստ-  
ներով: «Ավելի ղյուրահաղորդ և անմիջական մարդկանց շէ հանդիպել ես դեռևս... ինչպես  
փարիզեցիք» (Ա 148):

Այսուհետև քննվող բոլոր բառերը ևս ընտրված են այն սկզբունքով, որը կիրառել էինք  
նորակազմությունները քննելիս. այսինքն, քննարկվող բառիմաստները Ստ. Մախասյանցի բա-  
ռարանում տրված բառիմաստների համեմատությամբ նոր են և եթե ղեկողված են նրան հա-  
շորող բառարաններում, ապա տրված են Փափազյանի հուշագրությունից բերված օրինակ-  
ներով: Այդպիսիք են՝ մարդանալ, ոգեկոչ, լուսաբար բառերը, որոնց մասին կիսոսենք առան-  
ձին-առանձին:

ա) մարդանալ բայը երկուս գործածում է ոչ կրոնական իմաստով, ի տարբերություն  
ՀՀԲ-ում տրված նրա բացատրության՝ 1. մարմնավորվել իբրև մարդ (Փրիստոսի մասին),  
2. մարդակերպ երևել՝ Աստուծո կամ հրիշտակների մասին, և նշանակում է՝ «մարդ դառնալ,  
հասունանալ որպես մարդ»: «Հետագայում միայն կյանքի փորձառությունն ու ստեղծագործա-  
կան բնազդը պիտի հասունացնեն այդ հիմնական սաղմնավորումը, որը մեծանալով պիտի  
ծնվեր, մարդանալ և... պիտի դառնար քաջամուտ ծովակալ...» (Ա 128): «Այն (Հայաստանի  
քարտեզը — Ա. Պ.) իր շրջագծերով շատ էր նմանվում մի ըմբատ, գիսախոիվ պատանու,  
որը... մեռել էր, նորից հարություն առել և իր նոր կյանքի առաջին տարիներին իսկ մար-  
դացել էր... և սպառնում էր երեկվա թշնամիներին» (Բ 191):

բ) Ոգեկոչ-ը ըստ Ստ. Մախասյանցի բառարանի նշանակում է՝ «մեռելահարցուկ», սա-  
կան ակնհայտ է մեռելահարցուկ-ի և ոգեկոչ-ի միև կարբերությունը, երբ Փափազյանը խոս-  
տում է «ողբեր կյանքի կոչող» մեծ ողբերգուի՝ Շեքսպիրի մասին: «Եվ Շեքսպիրը՝ այդ ան-  
կրկնելի ռեկվիզը, իր ամենատես ակնարկը բեռնելով այդ ամբողջների մեջ, փնտրեց ու գտավ  
նրանցից ամենարժարագույն նկարագրերը... և տիրապետելով այդ գերազանց սովերեններին,  
տիրապետեց նաև ոգիների ամբողջ զանգվածին և... վերաստեղծեց մարդկային կյանքը բեմի  
համար և մարդը՝ բեմում» (Ա 293): Ինչպես տեսնում ենք, ոգեկոչ բառը նոր, բանաստեղ-  
ծական շունչ ու իմաստ է ձեռք բերել, որ կարելի է համարել Շեքսպիրի և նրա ստեղծագոր-  
ծության լավագույն բնորոշումներից մեկը:

գ) Լուսաբար բառը բառարաններում բացատրվում է՝ 1. լույս անող՝ արձակող, 2. լույս  
անող, լույսերը վառող, 3. եկեղեցու պաշտոնյա: Փափազյանը, օգտագործելով վերջին երկու  
իմաստները, բառը գործածում է որպես թատերական բնագավառի անվանում, որ նշանակում  
է՝ «թատրոնի աշխատակից, որը զբաղվում է բեմական լույսերի կարգավորմամբ»: «Նրա շը-  
նորհիվ... իմ թատերական խմբում առաջին անգամ ես ունեցա իմ տրամադրության տակ երեք  
բանվոր, մի լուսաբար, մի դիմահարդար, մի օգնական-ռեժիսոր...» (Բ 228):

Իմաստային նորարանությունների մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում  
այն բառերը, որոնք «Հետադարձ հայացք»-ում հանդես են գալիս բոլորովին նոր իմաստներով՝  
արդի հայերենի բացատրական բառարաններում ղեկողված իմաստների համեմատությամբ:  
Նշենք մի քանի բնորոշ օրինակ:

Վերածական ածականը բառարաններում տրվում է «վերածելի, վերածելու վերաբերյալ»,  
«վերածությունները ցույց տվող՝ արտահայտող», նաև՝ հնացած «վեր ածող, վեր բարձրացնող»  
իմաստներով: Փափազյանը լեզվական սրամիտ ձևունությամբ այս հնացած իմաստին նոր կեն-  
դանություն է հաղորդում, հնացած իմաստից անցում է կատարում մի նոր մակարդակի, և  
ածականական իմաստը փոխարկվում է զոյականականի, այն է՝ «զոյատական խոսք, զնահա-  
տական»: «... Մամուլը մի քանի հողավաճեցրով խոհուս վերածակալները նվիրեց թե՛ այդ թարգ-  
մանությունը, թե՛ բեմադրությունը և թե՛ դերակատարությունը» (Բ 57):

Բառային հնացած իմաստի թարմացում, նոր մեկնաբանություն կարելի է համարել հե-  
տևյալ նորարանությունը: «... եթե ես միշտ եղել եմ ու մնացել եմ միշտ արվեստի մարդը,  
ապա ինձ արվեստավորողների հարազատ սեփականությունը կա՛մ ու կմնամ միշտ» (Ա 322):  
Համեմատենք այն ՀՀԲ-ում տրված բացատրությունների հետ՝ 1. «արվեստով շինել, արվես-  
տագործել, 2. հարտարել, հարել և կոնսենք, որ «Հետադարձ հայացք»-ից թաղված օրի-  
նակում ստացել է մեկ այլ իմաստ՝ «արհեստավոր/արհեստ ունեցող/արվեստավոր/արվեստ  
ունեցող [արվեստավորող] ճանապարհով և նշանակում է՝ «արվեստավոր դարձնել, արվեստի  
մարդ դարձնել, նպաստել մեկի՝ արվեստի մարդ դառնալուն»:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ նոր բառիմաստներից շատերը փոխաբերական  
նրբիմաստներ են, բառային հիմնական իմաստին առնչվող նոր փոխաբերական նրբերանգներ:  
Բնագրային օրինակներով քննարկեք ասվածը: Այսպես, հետաքրքիր նորարանություն է խմորում  
բառի նորովի հնչող փոխաբերական՝ «էություն, խառնվածք, ոգի» իմաստը: «Իր լայն առումով  
եվրոպացի մարդ լինելով հանդերձ, այն էլ կաթոլիկ, հայ էր Երվանդն իր խմորումով» (Բ  
311):

Բազմալեզու ածականի համար տրված են մի քանի իմաստներ՝ «շատ լեզուներ ունեցող», «շատ լեզուներով խոսող», «շատ լեզուներով գրված», «շատ լեզվակներից կազմված»: Սակայն հուշագրության մեջ այն գործածված է ակնհայտ փոխարերական ներքիմաստով: «Մի բազմահայրենի լարի հանկարծական խզումով ստեղծված քսածնելի լուծվածքը նա վերջ էր դնում կյանքի ազմուկին, իր բազմալեզու դեմքը ծածկելով հանդիսատեսից...» (Ա 120): Այստեղ ընդգծված բառը նշանակում է՝ «շատ քան ասող, արտահայտող, խոսուն»: Այնուհետև՝ «նա ձգտում է քաջամարտ ասպետական ինքնազոհության և հանդիպում է վեհերոտ, անյլարդ, սպիտակաշյուն առնականություն»՝ հանձնիս Ալֆոնսի և Կարլոսի» (Բ 187): Ինչպես տեսնում ենք, սլավոնապարուն-ը, ի տարբերություն իր բառարանային սուպրատակարյունություն մտապող հիվանդ» իմաստի, համատեքստում ձեռք է բերել փոխարերական նոր իմաստ՝ «վեհերոտ, անարի, թուլակամ» նշանակություն, որի շնորհիվ ավելի վառ, ցայտուն գծերով են բնութագրվում տվյալ կերպարը, նրա էությունը:

Երանգապակ գրականը Փափաղյանը գործածում է նրբերանգային նոր, ավելի ընդգրկուն իմաստով, քան իր ունեցած՝ 1. «ներկայական, 2. փխր. երանգներ, գույներ» նշանակություններն են: Նա «երանգապակ» ասելով նկատի ունի ոչ միայն Մ. Սարյանի ներկայականը՝ բառիս ուղիղ իմաստով, ինչպես սովորաբար նշում են նկարիչներ, կերպարվեստի մասին խոսելիս, այլ՝ մեծ նկարչի գույների աշխարհն իրենց ամբողջության մեջ, նրա աշխարհայացքը, արվեստի ընդգրկման շրջանակները, աշխարհընկալման իր «գույները»՝ ընթերցումներն ու հայացքները: «Մեծատաղանդ, բազմակողմանի ու համապարփակ է նրա երանգապակը, համապարփակ այնքան, որքան իրեն շրջանատող աշխարհը» (Բ 16):

Հայրենադարձ զգացում, հայրենադարձ սիրտ բառակապակցությունների մեջ ակնհայտ է հայրենադարձ գոյականի նոր՝ փոխարերական-ածականական իմաստը: «... Թաքուն հայրենադարձ մի զգացում քաշում է նրանց դեպի նորը...» (Բ 274): Ստեղծագործության էջերում հանդիպում ենք գեղանձն բառի մի գործածության, ուր, մեր կարծիքով, նույնպես առկա է փոխարերական նոր ներքիմաստ: Գեղանձն-ը արդի հայերենի համար հնացած բառ է, որ նշանակում է «գեղակազմ, գեղամարմին»: Սակայն մեր արձանագրած օրինակում առաջին ընթերցումից ընկալվում է ոչ այնքան գեղեցիկ մարմին» հասկացությունը, որքան մարդու հոգեկան-բարոյական նկարագիրը, նրա գեղեցիկ հոգին: «Եմ ու իմ Թանկագին ընկերների, ի թիվս նրանց գեղանձն ընկերոջ» Դավիթ Մալյանի, ընթուշ Մետաքսյայի, հեղահամբույր ու աշխատունակ Սուրադյանի... բազմակողմ Վարյա Մելքոնյանի, շնորհալի Սիրան Ալավերդյանի... քաջակողով Գևորգ Աշուղյանի... շանթերով անձնավորելով մի անգամ ևս Մավրը՝ Մոսկվայում» (Բ 459): Քենոշ, հեզանմամբույր, բազմակողմ, փայլկողով, շնորհալի մակդիրների համատեքստային շարքում գեղանձն-ը, մեր կարծիքով, նույնպես կարելի է ընկալել նաև որպես մարդու հոգեկան աշխարհի բնորոշում:

Շատ պատկերավոր են շրջանակվել բայի հետևյալ կիրառությունները (լմտանանք նշել, որ շրջանակվել-ը բացատրվում է՝ 1. շրջանակի մեջ դնել, 2. շրջապատել, 3. փխր.՝ ամփոփել, սահմանափակել): «... դնանպան Անտոնիոյի գումփռային դուներ շրջանակվեց դարպասի փոքր պատուհանի մեջ...» (Ա 96): «... Մի քանի անգամ շրջանակվել էր այդ կերպարանքը իմ կուպեի կիսախուփ դռան արանքում...» (Բ 307): Անմիջապես ընթերցողի աչքի առջև պատկերանում են «շրջանակի մեջ դրված», պատուհանի շրջանակի, դռան արանքում «ամփոփված» նկարները:

Վերջ շարադրված քննությունը ցույց է տալիս, որ միևնույն բառաձևի սահմաններում բառային նոր իմաստները առաջացել են փոխարերության հիմքով, բառի փոխարերական գործածության հիման վրա: Սա գալիս է ևս մեկ անգամ հաստատելու, որ փոխարերությունը կարելի է դիտարկել նաև որպես բառակազմական երևույթ<sup>12</sup>:

Փափաղյանական նորաբանությունների մեջ հանդիպում են բառագործածության մի քանի նոր իրողություններ, որոնցից մի քանիսը կենրկայացնենք ստորև.

ա) զավանճակ բառը, ինչպես գիտենք, շեղոթ սեռի բայ է, լուսի -վ- ածանցով կրավորակերպ շեղոթ սեռի գուգահեռ ձև: Այս տեսանկյունից դիտելիս զավանճակված սիրա արտահայտության մեջ զավանճակված-ը նոր գործածություն է, որն ընդհանրապես, բնորոշ է հայերենին, սակայն իր համատեքստում արդարացվում է կիրառված բառախաղով: «... Գանյան էր և եղավ մինչև իր մահը, միակ բարյացակամ հոգին, անդամահան բարեկամը քանիցս զավանճակված սրտիս այդ քաղաքում...» (Բ 120):

բ) նմանօրինակ գործածություն է սուլել բայի -վ- ածանցով կրավորականի կազմությունը: Սուլել փոխարերաբար նշանակում է՝ «սուղոց արձակել որպես զոհության կամ դժգոհության՝ ծաղրի արտահայտություն»: Սեմություն և դիպուկություն հաղորդելով խոսքին՝ Փափաղյանը գործածում է բայի կրավորական ձեռք, որ համապատասխանաբար կենանակի՝ «սուլոցներով ծաղրի ենթարկվել, շրջադնվել հանդիսատեսի կողմից», «... Սուլվիսիի փաղյան հըռ-

չակավոր Մաջրին 70-ական թվականներին այդ գերում սուլվել էր նեպոլում՝ Անն Կարլոյի բնմիջ...» (Բ 25):

գ) Ինքնուրույն գործածության հետաքրքիր նմուշ է նախասահմանված հարակատար դերբայի գործածությունը որպես գոյական. «Ռեֆլեքսից և հակադեցուցությունից զրգոված կենդանի նյութը՝ մարդը, թավալվում է այն ուղիով, որ իր բնույթն է կամ ճակատագիրը, դրանով էլ անքավելի, և մարդը ենթարկվում է մի անխուսափելի նախասահմանվածի, որը իրենից է և իրենը, ինչպես ինքը նրանից» (Բ 343): Այստեղ նախասահմանվածը իմաստով շատ ավելի մոտ է նախասահմանություն գոյականին, իր մեջ խտացնում է ճակատագրի՝ անսահմանելի Ուժի, անմեկնելի Գույի գաղափարը և ավելի շուտ այն կարելի է ընդունել որպես գոյական քան թե՛ գոյականաբար գործածված դերբայ՝ զուտ քերականական իմաստով:

Արդի գեղարվեստական արձակի լեզվի զարգացման, բառապաշարի «թարմացման» իմաստով Վ. Փափազյանի՝ որպես լեզվաշինարար-նորարարի կարևոր ավանդներից է այն, որ գործուն բառապաշար ներմուծեց բազմաթիվ բառեր, որոնք «Հետադարձ հայացք»-ին նախորդող բառարաններում տրվում են հնացած կամ հազվադեպ գործածության նշումով՝ անզեղ, անհատակ, հաբատիպ, մեծանձե, խնկել, հաբցախնդիր, լայնորովայն, խաբամուտ, կանառվել, կամարահոն, բազմապատում, բունակալել, բարձրահոն, նավակայք, նավուլիդ, նավառաչք, ասկեմայան, շարահայած, փակեզ, մարդացուլ, տխրազգաց, կոբով (ածականի իմաստով) և այլքն: Փափազյանն այնպես հմուտ ու բնական կերպով է գործածում, որ դրանք հնարույր չեն թվում, և գեղարվեստական խոսքը չի տուժում, և դառնում կաղապարված, անկենդան «գրքային» լեզու: Գուցե այս նկատի ունևր ն. Մուրադյանը՝ հեղինակի «նախանձելիորեն ճոխ բառապաշարի» հետ միասին ընդգծելով նաև նրա «հնությամբ թարմ ոճը»<sup>13</sup>: Այս առումով արժանի պետք է մատուցել մեծ արվեստագետին որպես գրական մշակի, որի վարպետ ու բեղմնավոր գրիչը բարեբար ազդեցություն ունեցավ մեր լեզվի զարգացման գործընթացի վրա: Որպես բազմիմաց լեզվագետ ու արվեստագետ Փափազյանն իր վաստակն է բերում նաև թատերագիտությանը վերաբերող մասնագիտական բառապաշարում կատարած իր նորարարություններով: Այսպես, թատրոնի բնագավառին առնչվող արոշ տերմինների ու հասկացությունների համար նա գործածում է հայեցի համարժեքներ, ինչպես են՝ բեմառաչք, բեմահաղաբ, բեմահաղաբաբեմ, բեմարվեստ, միջնաղաղաբ, դիմահաղաբվել, դիմահաղաբում, դիմահաղաբություն:

Վերը ներկայացված ուսումնասիրությունները վկայում են, որ բազմաբնույթ նորակազմություններն ու այլ կարգի նորարարությունները էական ու բարեբար նշանակություն են ունեցել փափազյանական ոճի ինքնատիպության և թարմ հնչողության ձևավորման համար:

**А. А. ПЕТРОСЯН—Неологизмы в лексике мемуаров В. Папазяна «Ретроспективный взгляд».**— В статье представлены авторские неологизмы в мемуарной прозе Ваграма Папазяна как характерные для его писательского стиля приемы. Это, с одной стороны, лексические индивидуальные новообразования, с другой—новые смысловые словоупотребления.

Вместе с другими средствами художественной речи неологизмы обогатили поэтику Папазяна, создали непревзойденный колорит его прозы.

<sup>13</sup> ՏՃ՝ս ն. Մուրադյան, Վ. Փափազյանի գրական վաստակը, «Գրական թերթ», Երևան, 1969, 6 հունիսի: